

ՀԱՍԽՈՍՈՒԹԻՒՆ

Հանապարհորդարիւն Պողիկտեսի 'ի Հապիմ :

ԹՈՒՂԹ Ա. — Հարունակութիւն :

Հատ երկար չգնաց՝ Մալէոս հրուանգանը գիւմացիա երեցաւ, որն որ համբաւաւոր է նաւաբեկութեանց կողմանէ : Բոլոր նաւատորմիւր աւաւարեաց, հեռացաւ անկէց թիւս զօրութեամբ, ու թիւ մը ետքը Վիթերա կղզւոյն սեպացեալ ափունքը գիւմացիա ելան, ուր առջի անգամ խարխիս նետեցինք : Բայց գիշերը վրայ հասած ըլլալով ցամաք մօտիկնալը վտանգաւոր էր. անոր համար գլխաւորները որոշեցին որ ցամաքէն քիչ մը հեռու խարխիսը ձգեն, և ասանկով ցորեկուան անտանելի աշխատութիւններուն ահա խաղաղ գիշեր ունեցանք :

Հաղիւ թէ արեւուն ճառագայթները լեռներուն բարձր գագաթներէն սկսեր էին երևել, մեր թիւաւորները գիշերուան հանգստութեամբը ոգի առած՝ զարմանալի արագութեամբ նաւերը առաջ քշեցին : Այն համբաւաւոր կղզւոյն եղբէքէն նաւարկելով, անոր ափունքը գիտեցի՝ որ բոլոր սոյաւաթներով և փուշերով ծածկած էին, ու գիշերուան մթոյն պատճառաւ աչքիս չէին զարկած : “Այն է ուրեմն, ըսի նաւորիւրաւսին, այն անուանի Վիթերան¹, այն հեշտութեան աշխարհը, ու միանգամայն ծիծաղու և խաղաղ բնակարանը : — “Նա պատասխանեց ինծի ժպտելով մը. “Դուն ալ աչքովդ կը տեսնես. բանաստեղծից երեակայութիւնը բուն իսկ բնութեանէն շատ տարբեր է : Այս անբեր ու ափուր տեղուանքը կարծես թէ աղքատութիւն և ցաւ միայն կը գտնուին, և սակայն հաճոյից աթոռը այս երկրիս մէջ զետեղեցին : Այս ամայի կղզւոյս համբաւը ելաւ անոր անմոռելի ափունքներուն պատճառաւ. երբոր դեռ նաւարկութեան ա-

րուեստը նոր սկսեր էր ծաղկիլ : Տենարոս ու Մալէոս հրուանգաններուն մէջտեղը ըլլալով, երկար ասեն չհամարձակեցան անփորձ նաւարկողներ հոն ցամաք ելլելու. որովհետեւ մարգս իրեն երջանկութիւնը այն բաներուն վրայ կը դնէ որ չկրնար կատարել, երեակայութեամբ այն սպառնալից ժայռերը զմայլելի պալատներու տեղ գրաւ, ու այն մթին խռոշները խորհրդաւոր այրեր կարծեց. իսկ այն բիրտ ու աղքատ ժողովուրդը Նաղկան պաշտօնեայ սեպէց : Վերեայ որ այս տեղս, զորն որ Սիրոյ թագաւորութիւն ձեռացուցին, խիստ յարմարութեամբ կը յայտնէ այս ցանկութեան կրից խաբէութիւնը, որն որ առջի բերան կը հաճեցնէ, կը հրապուրէ ու կը զմայլեցնէ. բայց երբոր կը սկսինք զայն լաւ մը ճանչնալ, տանջանքէն ու գառնութենէ ուրիշ բան չենք գտներ մէջը : Մեր նախորդները գոհ չէին այս զուարճալի առասպելներով : Նայէ այն լեռնային ժայռերու գօտեյն, որ դէպ 'ի ծովուն մէջ երկնալով այն բարձր լեռով կը լմննայ. այն է ահա Տենարոսը, որուն ահա զանազան նաւորները ակամայ սարսափով մը կը լեցուին : Միշտ ալեկոծեալ ծովու մը ալիքները մեծ շառագմամբ այն հրուանգանին զարնուելով կը խորտակուին, որոնց փրփուրը մինչև 'ի ձախար կը բարձրանայ : Անոնք որ առջի անգամ այս ծովէս անցան, այս զարհուրելի տեսարանէս սոսկալով մտքերնին զրբին որ այս անգունդներուս մէջ չարագործաց հոգիք իրենց արժանի եղած պատիժը կը քաշեն, ու կարծեցին որ ալեաց գոչմունքը այն կորուսեալ հոգւոց յուսահատ վայնասունին ձայներն են, որոնք կը չարչարուին կատաղիներէն : Սակայն մարդիկ կամոց կամոց իրենց աղիտութեան խաւարը փարատելով՝ այս առասպելները մէկգի թողուցին, ու այն գագաթին ծայրը նկատուին տաճար մը շինեցին : Այն է ահա նաւաբեկողաց սփռփիւ պատասխարանը՝ և թէ ցամաք ելլելու բաղձն ունենան : Եւ չիսակն ըսելով՝ կրնան մի մարդիկ իշխանութիւն մը բանեցնել այն գծաղղներուն վրայ, որոնց աստուածոց բարկութիւնն ալ կը խնայէ :

“Այս զարհուրելի տեղոյս հիւսիսին գին են Մեսսենիոյ պողաբեր գաւառերը. այս այնպէս հարուստ երկիր է, որ Լակեդեմոնացոյցմէ նուաճուելով՝ անոնց իշխանութիւնը անպարտելի ըրաւ : Սակայն Եպամոնոնգ ազատեց զայն անոնց լուծէն, ու այն օրէն սկսեալ Սպարտայ զօրութիւնը տկարացաւ : Դիտէ այն խորին ծոցերը. կարծես թէ Պելոպոնեսի ափունքը կը կարեն կը բաժնեն իրարմէ. ասոր համար ահա մեր աշխարհագիրնէրը սօսի ծառի տերեւոյ մը կը նմանցնեն զայն. որով իրենք աւելի կը մօտիկնան ճշմարտին քան և թէ հազմայեցեք, որ Իսապիան կաղնիի տե-

1 Վիթերա անունը առաւ Վիթերոսէն, որ էր որդի Փիւնիկեայ : Հիմա յոյն եպիսկոպոսի մը աթոռ է, ու հին ասեն ունէր նաև ուրիշ քաղաք մ'ալ Սգանտիա անուամբ, ու նաև Ասաղկան անուանի տաճարը, յորում էր աստուածուհւոյս արձանը ամբողջ պատած այս ստորագրութեամբ. Τὰν χεῖρα ποτὶ φέροντα δῶε τὰν τὺχαυ ἐπιχαλῶν. Ով որ ձեռքը հոս կը մօտեցնէ, պէտք է որ բաղքը իրեն օգնութեան կոչէ : Վղիկն կը կոչուէր նաև Պորփիրուզոս. որովհետեւ գեղեցիկ ծիրանի կամ գեղեցիկ ծիրանեգոյն մարմարիոններ կ'ըլլէր ասկէց : 'Իրից կողմանէ Ճիշդ Լակոնիոյ գիւմացը կ'իյնայ. անանկ որ ատոր իշխողը ուղածին պէս Լակոնիան կրնայ չարչարել : Անոր համար Դէմարատ լակոնացին, Քսերքսեսին խորհուրդ կու տար Վիթերային տիրելու՝ թէ որ կ'ուզէր Լակոնիոյ տիրել : Վիթերան շատ անուանի մարդիկնէրուն հայրենիք եղեր է :

րեկի մը կը նմանցնեն : Սակայն մենք Սիկիլիոյ ծովը մօտեցնելու մօտիկներ ենք . գարձիր . քանի որ կրնաս , վերջին բարեգ առար Եռնաստանի , :

Այս խօսքերս որ լսեցի՝ դառն ցաւով մը սիրտս լեցուեցաւ , և թէպէս Աթենքէն շատ հեռու էի , ինձի այնպէս մը կու գար իբրեւ թէ երկրորդ անգամ մ'ալ իրմէն բաժնուէի : Եւ միթէ Եռնաստանի ամէն կողմը մեր հայրենեաց պատկերը մեզի չըտար : Կրօնքը , լեզուն , սովորութիւնները այնպիսի կապ մը հաստատեց եւն այս ժողովրդոցս մէջ , որ առժամանակեայ հակառակութիւններէն վնասուած ըլլալը չիմացուիր , ինչպէս երկու եղբարց մէջ՝ որ հակառակ շահուց պատճառաւ կրնայ քիչ մը աւելնալ մէջերնին բաժանմունք իյնալ , բայց արիւնը ու սովորութիւնները դարձեալ շուտով զանոնք կը միաբանեցնեն : “ Ո՛վ աստուածութիւնք Եռնաստանի , սիրտս ելած կանչեցի , ես ձեզմէ ոչ պատիւ կը խնդրեմ և ոչ անարգ հարստութիւններ . միայն այս շնորհէցէք ինձի որ որ մը նորէն այս քաղցր հայրենիքս տեսնեմ , ու նուիրեմ ձեզի արժանի ողջակէզներ այն տեղուանքը , ուր որ ըզձեզ պաշտելու սովորեցայ , ու մէկ անգամ մ'ալ կարենամ համբուրել անոր ոտքը , որ ինձի կեանքս շնորհէ : Հիմակ չեմ կրնար խուսիկ նուիրել ձեզի ձեր խորաններուն վրայ . սակայն ինձի պէս թըշուառին սիրտը որ զձեզ կ'աղաչէ , երբոր անարատ է , աւելի գեղեցիկ տաճար կ'ըլլայ ձեզի , :

Այս միջոցին մեր նաւերը այնչափ ծովուն մէջ բացուեցէն , որ երկնքէն ու ծովէն զատ բան մը չէինք տեսներ : Իմ մտացա ալ զբաղելու նիւթերը պակսելով , զորոնք որ ցամաքին ափունքը առջևս կը ներկայացնէին , սկսայ ուշադրութեամբ դիտել նաւերուն բազմաթիւ խումբը , որ գեղեցիկ կարգաւ մը առաջ կ'երթային : Նաւատորմին մէջ տեղէն կ'երթար հրամանատար ըստած նաւը , որն որ խելքին կողմը տեսակ մը կարմիր վրան ունէր , ասով միայն կը զանազանէր մէկաշնորհն . ուրովհետեւ մէկաշնորհ վրանները այլ և այլ գոյներէ էին : Իսկ նաւերուն ճակատը գրած էր մեծ մեծ գրերով իւրաքանչիւրին անունը , որոնց նշանակութիւնները Նաւախորատէսը ինձի մեկնէ : Իմին գանուած նաւուն անունն էր Պալէմաս աստուծոյն անունը . կային նաև Նեդոն , Դիփոն ու Կելեթոն , և այլն : Այս նշանաւոր անուններս , որոնք շատ հարկաւոր են բազմաթիւ նաւատորմին մը շարժմունքները ուղղելու համար , Հռովմայեցւոց լեզուովը Նեմոս¹ կը կոչուին , որ կը համապատասխանէ Եռնաց Բարսեթանին² :

Առջի գիծը կը կազմէին պատերազմական նաւերը , որոնցմէ իւրաքանչիւրին քիթը կար մէյմեկ պղնձէ երեքժանի կտուց մը . անոնց ետեւէն կու

գային հարկաւոր բաները տանող նաւերը , որոնց մէյմեկ կայմերուն ծայրերէն կախած էին մէյմեկ կողով . և ամէն մէկ նաւուն ետեւէն կ'երթային մէյմեկ թեթեւ նաւակներ : Իւրաքանչիւր նաւունի իւր խնամակալ աստուածը , որուն պատկերը նաւուն խելքը զետեղուած է զեկին մօտ , և այս տեղս լատիներէն կը կոչուի Tutela , որ կը նշանակէ Պաշտպանութիւն : Հոն կը մատուցանեն աստուածներուն աղօթքները ու ողջակէզները , ու նաև գաշնագրութիւնն ալ հոն կ'ըլլուի :

Նաւախորատէս տեղն ի տեղ ինձի պատմէն ետե ինչ գլխաւոր բան որ կար նաւատորմին վերաբերեալ , ուղեց նաև ցուցնել ինձի նաւու մը գլխաւոր մասունքը . զորոնք գիւրաւ միտք առի . ինչու որ կը յիշէի ինչ որ շատ անգամ Պիրէոն տեսեր էի : Հռովմական նաւու մը շէնքը ամենեկին կը նմանի յունականին . տարբերութիւնն է միայն իւրաքանչիւր մասանց անուանցը վրայ :

Գիշերը վրայ հասաւ , բայց մեր նաւարկութեան արգելք մը չըրաւ : Քաղցրաշունչ հով մը կը շնչէր , միայլուն աստղերն ալեքներէն ցոլանալով կարծես թէ կը կրկնապատկեր լոյսերնին , նաւաւարաց երգերուն հետ մէկտեղ թիւերուն կաշունակուր զարնուածքը մէկ ոտքով կ'իջնային կէլէին , ու Թեախի սիրելի ձկնկուլները հեռուանց ձայներնին կը խօսեցնէին՝ երբոր մեծագոյն փողատեն ատեն հնչելով , նաւատորմին ամէն կողմը պէտք եղած հրամանը կ'իմացնէր , ու անոր ճամբուն ուղղութիւնը կը ցուցնէր : Այս հիւսնալի տեսարանս բնականապէս կը շարժէ մարդուն սիրտը , որուն որ արդէն սիրտը կակիծի մէջ է : “ Ա՛հ , կանչեցի զեկավարին ձեռքը սեղմելով , ինչպէս վսեմ է բնութեան տեսարանը , ինչպէս կը ստիպէ զմեզ յոյսերնիս գնելու անոր վրայ , որ բնութեան շարժմունքները կ'ուղղէ : Կրնամ ես արդեօք տարակուսիլ որ այդ էակը , որուն մեծութիւնը կը քարոզեն ամէն արարածներ , չուզնայ նաև իմ վրաս իրեն մեծութիւնը ցուցնել , : Այս միջոցին խորին բուն մը տիրեց զգայարանաց վրայ , որ արդէն այնչափ յուզմունքներով աշխատած յոգնած էին : Քանի մը սիրտ զօրացնող երեւոյթներ ունեցայ , այնպէս որ նոր զօրութեամբ մը քաջալերուած արթնցայ պատրաստուած առանց վախի կրելու ինչ որ երկնքէն սահմանուեր էր գլխուս հանգիպելու :

Վերջապէս ցամաքը սկսանք տեսնելու , ու յոնկարծակի բոլոր նաւերէն ուրախութեան աղաղակներ լսուեցան : “ Ահա այս է Սիկիլիան , Ըսաւ ինձի Նաւախորատէս . այն կողմն , որուն բնակիչք իրեք այլ և այլ լեզուներ կը խօսին . մեր ծովերուն ամենէն ընդարձակ կղզին է : Իրեն ձեռք մեծ եռանկեան մը կը նմանի , անոր համար մեր նախնիքը զայն Տրինակրիա կոչեր են , կամ Երեք ծայրք : Հոս է Դիմետրէի տէրութիւնը , այն պողոտէր գաշտերովն է իր ճոխ գանձերուն պարծանքը , ուր որ մշակին յոյսն ու աշխատութիւնը ամենեկին սուրբ չեն երթար : Ետնայի գեղեցիկ մարգագետինը միշտ ծաղկներով զարդարուած է , զորոնք ժողոված ատենդ կարծես թէ ձեռքիդ մէջ նորէն կը բուսնին , ու զարմանքով բռնուած ճանապարհորդին քայլափոխից տակը կարծես թէ անթաւամ պսակներ կը ձևացնեն : Սակայն քայլափ և այսպիսի գեղեցիկ ձիւքերը Սիկիլիոյ շատ ծանր

1 Լատ. Insignes.

2 Παράσημον της νεώς կ'ըսուէր նաւու մը ճակատը գրուած նշանը , և այն անուամբ նաւն ալ կը կոչուէր , և այս էր աստուծոյ մը կամ կենդանւոյ մը պատկերը : Ասկից է որ նաւերէն ու մանր կը կոչուին χροί, και τραγος , խոյ և Նեմոս , ինչպէս որ յայտնի կ'երևայ Պրուտարքոսի Եօթն իմաստնոց խրախճանին մէջ , և ուրիշ գրոց մէջ : Եւ ասոնք կ'անուանէին Պաշտպան նաւեր :

նոտան : Եւրոպայի ու Աֆրիկէի մէջ տեղը զետեղուած ըլլալով, այս երկու աշխարհները շատ անգամ կատաղաբար կռուեր են զայն իրենց ձեռքը ունենալու համար . ու ոչ մէկ ժողովուրդ մը այնչափ անգամ օտար ազգի լուծին տակ գլուխ չէ խոնարհեցուցած՝ ինչպէս Սիկիլիան : Առջի ատենները քանի մը յոյն գաղթականութիւններ մեր հայրենեացը հետ զայն միացուցեր էին . մեր օրէնքները , մեր սովորութիւնները ու մեր լեզուն երկար ատեն հոն յարգ ունեցեր են . ինչուան հիմակ ալ Սիկիլիայի մէջ այս սկզբնական խառնուածքը յայտնի կ'երևայ :

« Եւստակիոս , որուն գագաթը գիրաւ կրնաս որոշել , թէպէտ և անկէջ շատ հեռու ենք , իւր բարձրութեամբ բոլոր կղզւոյն ընդարձակութեանը կը տիրէ : ու ստեպ անոր հիմունքը կը ցնցէ : Կ'ըսեն թէ Արամազդայ շանթերը այս լեռան խռոչներուն մէջ կը շինուին . կան ալ ոմանք որ կը կարծեն թէ այն Տարտարոսին բերաններուն մէջն է . բայց ամենքն ալ աստուածային բարկութեան գործիք մը կը սեպեն զայն , միշտ պատրաստ մահ կանացուները պատժելու : Բայց այս ալ պէտք է խոստովանել , որ այդ լեռան սպառնալից երևութիւնը Սիկիլիայիք աւելի առաքինի չեն եղած . Դիոգինէս բռնաւորը աւելի հետեւող ունեցեր է , քան թէ իմաստուն Գեղոնը : Բարոս կեղծաւոր , խաբէրայ են , ու հեշտութեանց հակառակ . ամենքն ալ Դամոկղեսին նման , որ այս երկրի մէջ ինքզինքը բոլորովին անկարգութեանց տուեր էր , առանց վախնալու մահունէ՝ որ գլխուն վրայ կախուած կեցեր էր :

« Ահա հիմակ Սիկիլիան Իտալիայէն բաժնող նեղուցին մէջն ենք : Սկիւլլայի ու Քարիբդիսի մէջէն անցնիլք պիտի , ուսկից նաւորդք առաջ խիստ կը վախնային . բայց հիմակ վտանգը քիչցած է . կամ այն է որ հիմակ նաւորդները աւելի փորձ եղած են , կամ հոս տեղս հանդիպած փոփոխութիւններով տեղւոյս գիւրջը փոխուած է , որով այս երկու ժայռերս ալ առջինին պէս չեն վախճներ : Հիմակ ալ գին գարձիր , տես Ենէ Յուստանին մէկ հարուստ մասն ալ . Լոկրիս , Սիբարիս , Մեգապոնտոս , Տարենտոն , որոնց առունները բաւական կ'իմացնեն անոնց ծագումը : Զախ գին կը տեսնես անուանին Մեսսինա , զորն որ շինեցին Մեսսինացիք , որոնք Սպարտիոյ լուծէն փախչելով այս հիւրընկալու ափունքը եկան ու այդ պանծալի քաղաքը կանգնեցին , որուն ընդարձակ նաւահանգիստը բոլոր ազգաց նաւերը կ'ընդունի : Ասոր գիմացի ափունքը , Իտալիոյ ծայրը կայ Հռեգիոն քաղաքը : Իբրև ստոյգ կ'ըսուի թէ աստեօք Սիկիլիան պարանոցով մը Իտալիոյ կպած էր , բայց սաստիկ երկրաշարժէ մը բաժնուեր է : Հռեգիոն անունը , որ յունարէն Բոթանուսն է , բառէն առած է , կը հաստատէ այդ կարծիքը » :

Նաւսիրաատէս խօսքը լմնցնելէն վերջը լռեց , ու սկսաւ նաւն ուղղելու միայն ուշ գնել , ու այն պիտի խոհեմութեամբ ու վարպետութեամբ գար .

ձուց , որ շուտով մը Իտալիոյ ծովը երանք , առանց ամենեւին ձախորդութեան մը հանդիպելու , որ խիստ յաճախ կը պատահին այն անցքին մէջ : « Այն կղզիներն որ արեւմտեան գին կը տեսնես , ըսաւ նաւորդը , Եւրոպայի կղզիներն են , բանաստեղծից բերանը հաշակուած : Հոն կը թագաւորէ Եւրոպոս ահարկուն նաւավարաց . ասկէց յարմար տեղ չէր կրնար գտնուիլ նաւարեկուութեանց աստուծոյն գահուն համար : Եւրիպոս այնչափ վտանգաւոր չէ , որչափ այդ ծովը՝ այն փոքր ժայռերէն պատած : Հովերը , գետնի տակ կը կրակները , միշտ աղեկոծեալ ալիքները՝ կարծես թէ իրարու գէժ կը կռուին այն ամալի կղզիները իրարու ձեռքէ յափշտակելու , որոնց թիւը գեա որոշ չգիտցուիր : Մեր օրերը մէկ հատը իջաւ ընկղմեցաւ ովկիանոսին մէջ » :

Լրգէն ամէն բան Հռովմ մօտենալին կ'իմացընէր : Բոլոր ծովը նաւերով ծեփած էր , որոնք այն հաշակաւոր քաղաքը այլ և այլ ազգաց հարկերը կը տանէին : Ոմանք Սիկիլիոյ արմտիքով բեանաւորուած էին , ոմանք Իբերիոյ ու Աֆրիկէի ճոխ բերքերով , ուրիշներն ալ զինուորներով լեցուն նոր ժողովուրդներ նուաճելու կ'երթային , կամ թէ յաղթուածներուն աւարաւը լցուած կը գառնային : Ես մինչդէռ բոլորովին ափշած ու գրեթէ ինքնիրմէս ելած այս կարգէ գուրս տեսարանը կը գիտէի , որն որ ինծի հազար ու մէկ մտածութեանց նիւթ կ'ըլլար , նաւսիրաատէս գարձաւ ինծի ըսաւ . « Աչքդ արեւելեան գին գարձուր ու տես մէյ մը սա հոյակապ քաղաքը . այն է ահա Պարթենոպէն . ուր նաև Հռովմայեցիք իրենց Հռովմէն աւելի հոն բնակիլ կը սիրեն : Կ'ըսեն որ այդ Պարթենոպէն համբարուի մը անունն է , որն որ տեսնալով որ իրեն հրապուրանքները Ոգիսեայ որդւոյն վրայ ազդեցութիւն մը չէին ըներ , յուսահատութենէն ալիքներուն մէջ կորաւ : Բայց սովորաբար նէսպոլիսն¹ կը կոչուի , կամ Նոր քաղաք , ինչպէս որ Յոյնք հիմնելու ատեն անուանեցին : Այս ճոխ քաղաքին հետեի գին կը տեսնուի Վէսուվ լեռը , որուն համար կ'ըսուի որ աստեօք այս կողմերս շատ աւերմունքներ ու մահեր պատճառեւ է : Հիմակ անոր ստորոտները գեղեցիկ գեղերով ծածկուած են . բայց ո՞ գիտէ թէ օր մը չգլջան պիտի այն խաղաղ նստած բնակիչները՝ իրենց անխոհեմ ապահովութեանը վրայ :

« Այն կղզին որ կը տեսնես բարձր ժայռերով պատած Նէսպոլիսի ծոցոյն բերանն է Քարբէան , որն որ ձմեռուան բարեխառնութեանը պատճառաւ անուանի է : Այդ երկիրը որուն առջեւէն հիմա կ'անցնիլք է պտղաբեր կամպանիան . ասկէց անդին մեր ճամբորդութիւնը շուտով կը լմննայ : Պատրաստ կեցիր որ անխուղ սրտով տեսնաս զայն . ցուցուր Հռովմայեցւոց այն արիւնթիւնը , որն որ ձախորդութենէ չընկճիր . ու մի մոռնար աստուածները » :

Այս ըսելէն վերջը Ոստիոյ նաւահանգիստը հասանք , Տիբերիս գետին բերին մօտ : Երբոր այն երկիրը տեսայ որ իմ հայրենեացս յաղթեր էր , գողմէն է բոլոր սեփարներուս սիրեց : Ո՛վ Հռովմ .

¹ Քոլոս , Սիկիլիան Իտալիայէն բաժնուած ըլլալուն երկրաշարժներուն ու ծովուն բռնութեանը պատճառաւ , ինչպէս որ ոմանք կը մեկնեն :

¹ Νεάπολις , այսինքն է νέα πόλις , Նոր քաղաք :

միթէ բաւական չէ՝ քու փառացի մեծանձն ժողովուրդ մը լուծիդ տակը խոնարհեցնելը, ու կը բռնագատես ալ որ յաղթածները գան խոնարհին այն ձեռքին տակը, որ զանոնք նուաճեր է :

Երբոր ես նաւէն ելելու վրայ էի, հաւաքիրատէս աջը ինծի երկնցուց, զոր ես յարգանք համբուրեցի : Իարձաւ ինծի “ Որդեակ, ըսաւ, ամենին մի արամիր, ու յոյս ունեցիր բարեյաջողութեան հանդիպելու : Դու այս համառօտ անցքիդ մէջ՝ չյուսացած միտիծարութեդ հանդիպեցար նոյնպէս հռովմ ալ մաքէդ չանցած միտիծարութիւններ պիտի գտնես : Պատանեոյ մը յանձնարարութիւնը իր անձէն կը կախուի . սիրելի ըլլալ ուզողը բաւական է որ արժանաւորութիւն ցուցնէ : Բարոճ էր թաւ : Ամենին մտքէդ չհանես,

որ ինչպէս որ ամէն հով ձախող չըլլար, այսպէս ալ կրնայ ըլլալ որ երբեմն նաև մէկ մըրիկ մը զմեզ նաւահանգիստ հասցնէ 33 :

Ահա քեզի, հայր իմ սիրելի, իմին ինչուան Ոստիա ըրած ճամբորդութեանս մանրապատում պատմութիւնը . իմին քեզմէ բաժնուէրէս ետքը այսպիսի գերութեան վիճակիս մէջ ամէն մէկ բանը տեսնելու և լսելու ատեն մէկ հառիկ միտիծարութիւնս այս է, մտածելս թէ այս տեսածս այս լսածս պիտի գրեմ իմ հօրս . և այս քիչ օրուան մէջ փորձեցի որ այս կերպ մտածելովս խիստ ուշադիր կ'ըլլամ ամէն տեսածիս և լսածիս, և արեւրութեանս մէկ մասն ալ քու յիշատակովդ կը փաբատեմ :

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Անանիայի Շիրակունոյ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման :

Հարց. Դ. — Հապ ուխտին Սոփեայ՝ զհինգ մասն առնուն սարկաւագունքն, և տասներորդ մասն առնուն քահանայք, և երկերիւր քառասուն լիտր առնուն եպիսկոպոսունք, և երկու հազար լիտր այլ ուխտն : — Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ լիտր լինի հապն :

Լ. — Ժ. — Լիցին 240 և 2000 լտերքն = * , և հապն = * . յորմէ հինգերորդ մասն նորին լինի $\frac{*}{8}$, և տասներորդ մասն նորին $\frac{*}{10}$, որք միանգամայն ընդ 2240 = * լտերսն պարտին հաւասար գողւող վանգակ հասիցն :

Վասն որոյ $\frac{*}{8} + \frac{*}{10} + * = *$

և ջնջեալ զկոտորակն մի առ մի բաղմապատկելով զամենայն մասունս հաւասարմանն 'ի ձեռն հասարակաց յարանուանողին 10, գտանեմք

$$2* + * + 10* = 10* ,$$

զոր վերածեալ և փոխադրեալ գտանեմք

$$10* = 7* ,$$

և բաժանեալ յ7

$$\frac{10}{7} * = * :$$

$$\text{Արդ որովհետեւ ըստ ենթացորդութեանս է } = 2240, \text{ ապա } 3200 = 2240 \times \frac{10}{7} = 320 \times 10 =$$

$\frac{10}{7} *$, և $* = \frac{10}{7} * = 320 \times 10 = 3200$. և այս արտագրեալ ցուցանէ թէ լինի հապ ուխտին երեք հազար և երկու հարիւր լիտր . որ և է համեմատ ամենայն հանգամանաց առաջի եղեալ հարցմանս :

Ստուգութիւն . — Ըստ հանգամանաց հարցմանս է

$$\frac{*}{8} + \frac{*}{10} + * = *$$

արդ փոխանակելով զ* ընդ 3200 ոց, որ է հապ ուխտին՝ գտանեմք լեալ հինգերորդ մասն նորին

$$\frac{*}{8} = \frac{3200}{8} = 640$$

տասներորդ մասին նորին

$$\frac{*}{10} = \frac{3200}{10} = 320$$

որք միանգամայն ընդ լտերս

$$2240$$

առնեն լիտր

$$3200$$

Հ. Հ. Պ

Անցեալ ամսուսն դրուած կեղծագրութիւնն է

Անի—ծա—բերան—օր—ինի—սիրտ 'ի չա—րի—սանդ—ա—դար ձգի 'ի դիւաց .

Իս կայ—ր—ամբ 'ի ծիբար—ութ—իւն—սուր—ա—խան—այ 'ի մի—տ—սան—ծի—ն :

Անիծաբեր անօրինի սիրտ 'ի չարիս անդադար ձգի 'ի դիւաց . Իսկ այր ամբիծ 'ի բարութիւնս ուրախանայ 'ի միտս անձին :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ